

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՅՏԵԱՅՔՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մայրաքաղաքեան «Նովոե Վրեմիա» (Նոր-Ժամանակ) մեծ յրագրում աչս ամիս լոյս տեսաւ յօդածների մի շարք, նւիրւած Ղարսի և Բաթումի շրջանների հողային վիճակին և նոյն լրագրի «Սոորոժիլ» աշխատակցի աւելի վաղ լոյս տեսած յօդածը «Русское дѣло въ Батумской области» (Ռուսական գործը Բաթումի շրջանում): Պետերբուրգի թերթի այդ յօդածները իսկոյն նկատեցին Կովկասեան մամուլի մէջ, և մասնաւորապէս տեղական «Նովոե Օբոզրենիե» մի շարք հիմնաւոր յօդածներով յետ աւեց մայրաքաղաքի թերթի մեղադրանքները Կովկասում ծառայող և Կովկասեան ծագումն ունեցող (իմն, հայ և վրացի) պաշտօնեաների վրայ:

Յօդածագիր Սոորոժիլը մատնում է ամենքի ուշադրութեանը աչս զարմանալի թւող «զարմանալի» շանդամանքը, որ Բաթում-քաղաքում, ուր 25,000 բնակիչ կայ, միայն 15 ռուս սեփականատէրեր կան: Այսպիսով ամեն տեղ զարմանք և զարմանք: Բայց այն, ինչ «Նովոյե Վրեմիան» է ասում՝ իսկապէս շատ զարմանալի է. իբր թէ Բաթումում ռուսները չեն կարողանում սեփականատէրեր դառնալ՝ Կովկասեան ծագումն ունեցող պետական պաշտօնեաների պատճառով, որոնք իբր թէ «սեպարատիստական» (անջատելու, իմա Ռուսաստանից Կովկասը անջատելու) ձգտումներ ունեն: Ինչ անհեթեթութիւն, որքան անիրաւ մեղադրանք տեղական հայ ու վրացի պաշտօնեաների վրայ: «Նովոյե Վրեմիա»-ն և նորա թղթակիցը ամենեւին չեն հետաքրքրւում իմանալու թէ ոնքան ճշդութեամբ են գործադրւում պետական օրէնքները Բաթումի

շրջանում: բայց օրէնքի հիման վրայ դժւարութիւններ եղան որ մի ուսու հողային կալածք ձեռք բերի Բաթումի շրջանում — և ահա աղաղակ կը բարձրացնեն թէ մեղաւորը այդտեղ կովկասեան ծագումն ունեցող վրացի կամ հայ պաշտօնեան է:

Ինչ է առաջարկում չիշեալ թերթը այդ եցաւին՝ դարման անելու համար. քշել տեղական ծագումն ունեցող պաշտօնեաներին, նոցա պաշտօն տալով Ռուսաստանի ներքին նահանգներում, իսկ նոցա տեղը նշանակելով ուսու մարդկանց: Եւ զիտէք իսկապէս ում դէմն են ուղղած այդ տողերը. Քութայիսի նահանգի և Բաթումի շրջանի պետական կալածանքների կառավարիչ վրացի պ. Փամբեկելիի և պ. Աբաղաձէի դէմ: Պաշտպանած լինելով պետական կալածանքների շահերը, որի պատճառով շատ մարդիկ չեն կարողացել սեփականատէր դառնալ Բաթումում, և զոցա մէջ էլ մի երկու ուսնեք, — նոքա իբր թէ սեպարատիստական քաղաքականութիւն են բանեցրել... Եւ ի վերջոյ «Նովոե Արեմիա»-ն առաջարկում է Բաթումի և Ղարսի շրջանների համար սենատորական ընտրելիք (վերատուգութիւն) նշանակել: Ինչ սպառնալիք!

Պաշտպանում է «Նովոե Արեմիայի» մեղադրանքների դէմ վերջապէս և Ղարսի կառավարչութիւնը տեղական «Արս» ուսական թերթի բերանով: «Արս» լրագիրը ապացուցանում է որ ամեն ջանք գործ է դրած Ղարսի շրջանում ուսական տարրը զօրեղացնելու համար: Հրաւիրում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը «Արս»-ի յօդածից այս կտորի վրայ:

«Ռուս գաղթականներին, ասում է նա, տրւած են լաւագոյն հողերը, իրանց ընտրութեամբ, Ղարսի շրջանի (մեծ) ճանապարհների և քաղաքների մօտ այսպէս օրինակ, Ալեքսանդրապոլից Ղարս ձգող ճանապարհի վրայ և աւելի հեռու դէպի Սարիկամիշ, ճանապարհորդները հաճութեամբ հանդիպում են բազմաթիւ ընդարձակ բարեկարգ ուսու գիւղերի, որոնց յատկացրած են շրջանի լաւագոյն և շատ ընդարձակ հողերը: Նրջանի (նահանգի) վարչութիւնը, մեծ նշանակութիւն տալով այն բանին, որ Թիւրքիայի սահմանակից երկրում ուսու տարրը զօրեղանայ, աշխատել է այստեղ բնակեցնել բուն ուսու մարդկանց և մինչև անգամ ամենեւին չի թոյլ տւել օտար գաղթականներին ոչ միայն ամբողջ գիւղերով

այլ և առանձին ընտանիքներով. և այդ հանգամանքը շատ լա-  
յալտնի է բարձրագոյն իշխանութեանը: Այսպիսով, բնակեցնելով  
ամենայարմար հողերը բացառապէս ուսւ տարրով, վարչութիւնը  
պէտք է մտածէր նաև արքունական այլ ազատ հողերի մասին,  
որ անբնակ էին թողել ղէպի ծածկաստան դուրս գաղթածները  
և որոնց վրայ հաստատելուց հրաժարուում էին ուսները, պատ-  
ճառ բերելով նոցա փոքր յարմարութիւնները: Երջանի կառավա-  
րութիւնը նաև այստեղ գործել է յօգուտ ուսական տարրի, այդ  
հողերը տալով Քիւրքիայից եկած յոյներին, որոնք դաւանում են  
կալսութեան մէջ իշխող ուղղափառ հաւատը և որոնք քաղաքա-  
կան կողմից միանգամայն համերաշխ են ուսւ ազգաբնակութեան  
հետ: Միայն փոքր քանակութեամբ գիւղեր են տրւած Քիւրքիայից  
գաղթած հայերին, որոնք ստիպւած էին մեր զօրքերի հետ այստեղ  
գալ, երգերու մի վիշալէթից, պատերազմը վերջանալուց յետոյ:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի: